

Համաձայնագիր N 1

25.09.2025թ. կնքված N COP-ԾՁԲ-26/01 պայմանագրի

ք. Երևան

«28» 04 2026թ.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն, ի դեմս նախագահին փոխարինող Գևորգ Բաբայանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), և որի անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետ Լիլիթ Գևորգյանը (նույնականացման քարտի համար՝ 014388516, տրված 31.01.2023թ, 001-ի կողմից), մի կողմից, և «Մերիդիան հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերությունը (ՀՎՀՀ 0261409, գտնվելու վայրը ք. Երևան, Ոսկերիչների փ, հ 1), որի անունից հանդես է գալիս տնօրեն Սամվել Մանուկյանը (ծնված 06.01.1952թ, անձնագրի սերիա՝ AU0290088, տրված 01.06.2021թ, 011-ի կողմից, հասցե ք. Երևան, Բոլոսովի փ, շ 23, բն 18) (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, (Պատվիրատուին և Կատարողին միասին հիշատակելիս այսուհետ՝ Կողմեր), կնքեցին Կողմերի միջև 25.09.2025 թվականին կնքված N COP-ԾՁԲ-26/01 պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.02.2026 թվականի N 190-Ն և 19.03.2026 թվականի N 306-Ն որոշումները, Կողմերի միջև 25.09.2025 թվականին կնքված N COP-ԾՁԲ-26/01 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 12.1 և 12.2 կետերը՝ Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի 3.1 կետում նշված «5.775.000.000 (հինգ միլիարդ յոթ հարյուր յոթանասունհինգ միլիոն)» թիվը և բառերը փոխարինել «5.931.566.700 (հինգ միլիարդ ինը հարյուր երեսունմեկ միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար յոթ հարյուր)» թիվ և բառերով:

1.2 Պայմանագրի անբաժանելի մաս համարվող հավելված N 1-ի «Խոշորացված ցուցիչներ» աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի :

1.3 Պայմանագիրը լրացնել նոր՝ հավելված N 4-ով՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում նոտարական վավերացման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:



| | | | |
|---|--|----------------|-----------------|
| | իշը՝ -6.00) | | 1404,0 700,0 |
| | — «Գ» մասնաշենք՝ նախասրահ (նիշը՝ 0.00) | մ ² | 339,5 |
| | — «Դ» մասնաշենք – 5 հարկ | մ ² | 7850,7 |
| | — «Ե» մասնաշենք՝ երկհարկանի անցուղի՝ «Դ» մասնաշենքից դեպի 2-րդ մասնաշենքի հարկ 5 | մ ² | 1320,4 |
| | — «Զ» մասնաշենք՝ երկհարկանի սանհանգույց | մ ² | 158,70 |
| | — «Է» մասնաշենք՝ նախասրահ (նիշը՝ 6.00) | մ ² | 336,4 |
| 3 | Համար 5,6,7 շինություններ-ինժեներական կառույցներ | մ ² | 368,2 |
| | — էլ. ենթակայան հ.4 | մ ² | 69,3 |
| | — էլ. ենթակայան հ.2 (նորակառույց) | մ ² | 93,4 |
| | — էլ. ենթակայան հ.3 (նորակառույց) | մ ² | 93,2 |
| | — կաթսայատուն (նորակառույց) | մ ² | 112,3 |
| 4 | Բետոնե հարթակների հողային աշխատանքներ (ժամանակավոր կառույցների համար) | մ ² | 6750,0 |
| | Ընդհանուր տարածքների բարեկարգում | մ ² | 39,000,0 |

* Աստղանիշով գրված է Հ.2 մասնաշենքի 6-րդ հարկի տարածքը, որը ամրագրված է «COP 17» պատասխանատուի կողմից (նիշը՝ 22,80)»:

« »

2026թ. կնքված

«19» «01» 2026թ.

«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2026/3» ծածկագրով պայմանագրով

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում | | | |
|--------------------------------------|---|---|---|-------------|-------------|-------------|
| | | | Առաջին կիսամյակ | Ինն ամիս | Տարի | Ընդամենը |
| 1 | 70221100/2 | Ոչ բնակելի անշարժ գույքի վարձակալության կամ լիզինգի ծառայություններ | 87 267 000 | 116 784 000 | 156 566 700 | 156 566 700 |



ան ակտի կոդ: 520-20260428-117-10042527
ան ակտի գաղտնագիր: 8E9D6J



ու հազար քսանվեց թվականի ապրիլի քսանութ

տվյն համաձայնագիրը վավերացվել է իմ՝ Հայաստանի Հանրապետության ԵՐԵՎԱՆ
Նոտարական տարածքի Նոտար ԷԼՄԻՐԱ ԳԵՎՈՐԳԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՍ կողմից:
Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը և
գործունակությունը ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ՝ 9034 ----- ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճարի մեծությամբ ՀՀ
դրամ, որը չի ներառում ավելացված արժեքի հարկը՝ 20%՝ համաձայն «Օրենսդրական ակտերի
մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

Նոտար

Էլմիրա Գևորգի Դանիելյան

